ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2024 թվականի N 806-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1582-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 5-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարությունը» բառը փոխարինել «ներքին գործերի նախարարությունը» բառով.

2) 6-րդ կետի 1-ին ենթակետը «բնութագիրը» բառից հետո լրացնել «, իսկ անշարժ գույքի դեպքում՝ նաև դրա նույնականացման տվյալները (վկայականի համար և գույքի հասցե կամ կադաստրային ծածկագիր)» բառերով.

3) 7-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառերով, իսկ

«արտակարգ իրավիճակների նախարարությանը» բառերը՝ «ներքին գործերի նախարարությանը» բառերով.

4) 11-րդ կետում «արտակարգ իրավիճակների,» բառերը փոխարինել «ներքին գործերի,» բառերով, իսկ «գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի,» բառերը՝ «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի,» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ